

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	2
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	6
ՀՀ պետական բյուջեի եկամուտները	8
ՀՀ պետական բյուջեի ծախսերը.....	10
ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման	13
ՀՀ պետական բյուջեի պակասուրդը.....	19
ՀՀ պետական պարտքը.....	21
ՀՀ պետական բյուջեի համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին	22
ԱՄՓՈՓՈՒՄ	24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսությունը 2020 թվականի բացասական շուկերի՝ COVID-19-ի համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների ազդեցություններից կրել է զգալի վնասներ և երկարաժամկետ կորուստներ: Այդ երևույթները արտահայտվում են մի կողմից մինչգնաժամային ժամանակահատվածի համեմատ ավելի ցածր տնտեսական ակտիվությամբ, մյուս կողմից՝ ապագայի նկատմամբ հակասական սպասումներով: Դրանց հաղթահարման և բացասական ազդեցությունների մեղմման հնարավորություն ունենալու նպատակով կառավարությունը 2020-2021 թվականներին օգտվել է հարկաբյուջետային կանոններով սահմանված «բացառիկ դեպքի» կարգավորումներից և մեծացրել է ընթացիկ ծախսերը՝ իրականացնելով հակաճգնաժամային միջոցառումներ: Վերջիններս, սակայն, չունենալով բարձր արդյունավետություն, 2020թ. չեն նպաստել տնտեսական անկման նշանակալի մեղմմանը, իսկ 2021 թվականին, դրանց գրեթե չեզոքացման պայմաններում, տնտեսական վերականգնում փաստացի տեղի չի ունեցել:

Այս իրավիճակում, կառավարությունը ներկայացրել է 2022թ. պետական բյուջեի նախագիծը, որը պետք է պարունակի կառավարության տնտեսական ուղերձը և նվազեցնի ապագայի նկատմամբ անորոշությունները: Սակայն, դա նույնպես չի հաջողվել իրականացնել, քանի որ 2022թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները արտահայտում են կառավարության սխալ պատկերացումները տնտեսական իրավիճակի վերաբերյալ, իսկ դրանց վրա հիմնված ծախսային քաղաքականությունը արժանահավատություն չի ներշնչում: Մասնավորապես, 2022թ. համար կառավարությունը կանխատեսում է 7.0% տնտեսական աճ, որը զգալիորեն բարձր է, ինչպես կառավարության ընդամենը մի քանի ամիս առաջ հրապարակած, այնպես էլ այլ կառույցների և մասնագետների կողմից կատարված կանխատեսումներից:

Այդ բարձր տնտեսական աճի պայմաններում կառավարությունը նպատակադրել է ապահովել բավական հավակնոտ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում, ինչի հաշվին ակնկալվող լրացուցիչ եկամուտներն արդեն իսկ ծանրաբեռնվել են ծախսային պարտավորություններով: Ընդ որում, բարձր տնտեսական աճի ապահովման գործում էական դերակատարում է ակնկալվում պետական կապիտալ ծախսերի զգալիորեն մեծացված ցուցանիշից: Վերջինիս ծրագրված ծավալը 2022թ. հասցվել է ՀՆԱ-ի 4.3%-ին, սակայն հաշվի առնելով կառավարության՝ վերջին տարիներին, ինչպես նաև ընթացիկ տարում կապիտալ ծախսերի ցածր կատարողականները և այդ ուղղությամբ որևէ գործողության բացակայությունը, անիրատեսական է նման մեծ ծավալով կապիտալ ծախսերի իրականացումը: Կապիտալ ծախսերի կատարման

թերացումը բացասաբար կազդի տնտեսական ակտիվության վրա՝ հանգեցնելով պլանավորվածից ցածր տնտեսական աճի, հետևաբար նաև եկամուտների ցածր հավաքագրմանը՝ ռիսկեր ստեղծելով կառավարության կողմից ստանձնած ծախսային պարտավորությունների կատարման համար:

Ավելացնենք, որ 2022թ. կառավարությունը հանձնառություն ունի վերադառնալու հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը, ինչը նշանակում է, որ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով փոխառու միջոցներ չեն կարող ներգրավվել: Հետևաբար, պետական բյուջեի կատարման համար անհրաժեշտ պայման է դառնում նախանշված բարձր տնտեսական աճի ապահովումը, ինչը նշանակում է, որ կառավարությունը պետք է լրջագույն ջանքեր ներդնի այդ ուղղությամբ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՀՀ տնտեսության վրա 2020 թվականի բացասական շոկերը զգալի ազդեցություններ են ունեցել, որոնց հետևանքները շարունակվում են նաև 2021 թվականին: ՀՀ կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային միջոցառումները բավարար չափով չեն մեղմել տնտեսական անկումը 2020 թվականին՝ օգնելով փոքրացնել տնտեսական անկումն ընդամենը 1.3 տոկոսային կետով¹, իսկ ընթացիկ տարում հակաճգնաժամային միջոցառումները գրեթե բացակայում են: Այդ պայմաններում, 2021թ. առաջին 9 ամիսների տվյալներով՝ ՀՀ տնտեսությունը դեռևս չի վերականգնվել, քանի որ տնտեսությունում ստեղծված իրական արդյունքն ավելի փոքր է, քան մինչճգնաժամային ժամանակահատվածում: Այսպես, հունվար-սեպտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 4.4%, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 6.8% անկում: Դա նշանակում է, որ 2021թ. տնտեսական ակտիվությունը իրական արտահայտությամբ շուրջ 2.7%-ով ցածր է մինչճգնաժամային ժամանակահատվածից: Ավելին, տնտեսական ակտիվության ցուցանիշի դանդաղման միտումը վերջին ամիսներին (հունվար-հուլիսի ՏԱՑ-ը կազմել է 5.2%, որն այնուհետև դանդաղել է՝ հունվար-օգոստոսին հասնելով 4.8%-ի, իսկ հունվար-սեպտեմբերին՝ 4.4%-ի) նախանշում է տնտեսական վերականգնման հետաձգումը և տնտեսությունում խնդիրների շարունակությունը:

Միևնույն ժամանակ, տնտեսական աճի վերաբերյալ տարբեր կանխատեսումներն էականորեն տարբերվում են՝ հատկապես 2022թ. համար: Նվազող տնտեսական ակտիվության պայմաններում կառավարությունը դեպի վերև է վերանայել 2021թ. տնտեսական աճի կանխատեսումը՝ 2022-2024թթ. ՄԺԾԾ

¹ Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն (2020թ. տարեկան), էջ 203:


փաստաթղթում արտացոլված 6.0%-ից 2022թ. բյուջեի հիմքում դնելով 6.5%: Ընդ որում, այդ 6.0%-ը զգալիորեն բարձր էր 2021թ. պետական բյուջեի հիմքում դրված 3.2% կանխատեսումից: Սակայն, եթե 2022-2024թթ. ՄԺԾԾ-ում տնտեսական աճի կանխատեսման վերանայումը սպասելի էր, քանի որ 2021թ. առաջին ամիսներին տնտեսական ակտիվությունը սպասվածից ավելի արագ էր վերականգնվում, ապա 6.0%-ից 6.5% վերանայումը ոչ մի կերպ չի համապատասխանում ընթացիկ զարգացումներին և միտումներին: Արժույթի միջազգային հիմնադրամը նույնպես 2021թ. համար կանխատեսում է 6.5% տնտեսական աճ՝ այն ենթադրությամբ, որ կառավարության կողմից հայտարարված տնտեսական քաղաքականության բոլոր միջոցառումներն ամբողջությամբ կիրականացվեն: ՀՀ կենտրոնական բանկի կանխատեսումները, սակայն, զգալիորեն ավելի պահպանողական են. 2021թ. համար կենտրոնական բանկը կանխատեսում է 5.4% տնտեսական աճ:

2021թ. կանխատեսումներից ավելի լավատեսական և հավակնոտ է կառավարության 2022թ. տնտեսական աճի կանխատեսումը, որը կազմում է 7.0%: Սա, հավանաբար, ոչ թե կանխատեսում է, այլ տնտեսական աճի նպատակադրում և համապատասխանեցում կառավարության ծրագրում արտացոլված թիրախին: Ըստ 2022թ. բյուջետային ուղերձի՝ «կանխատեսված տնտեսական աճի հիմքում ընկած են ՀՀ կառավարության կողմից թիրախավորված տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են մեծածավալ պետական ներդրումների իրականացումը ենթակառուցվածքներում և մարդկային կապիտալի զարգացմանը միտված ոլորտներում, գործարար միջավայրի բարելավման, տեխնոլոգիական առաջընթացի ապահովման, տնտեսության արտահանելի հատվածի և արտահանման խթանմանն ուղղված քաղաքականությունները, որոնք կխթանեն ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա միջոցներով ֆինանսավորվող մասնավոր ներդրումների իրականացումը, կնպաստեն արտահանման ծավալների մեծացմանը, ինչպես նաև ընդհանուր արտադրողականության բարձրացմանը»: Սակայն, կարող ենք նկատել, որ նմանօրինակ թիրախներ եղել են նաև ինչպես 2021թ., այնպես էլ նախորդ տարիների բյուջեի ծրագրերում, որոնք սակայն չեն իրականացվել: Հետևաբար, բավական ռիսկային է վերոհիշյալ նպատակադրումների հիման վրա կանխատեսել 7.0% տնտեսական աճ և դրա հիման վրա նախատեսել ծախսային պարտավորություններ:

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը 2022 թվականին միտված կլինի տնտեսական աճի արագացմանը՝ հիմնականում պետական ներդրումների մասնաբաժնի մեծացման միջոցով: Սակայն, պետական ներդրումների բարձր մակարդակի թիրախավորումը կասկածելի է՝ հաշվի առնելով նույն կառավարության նախորդ տարիների վարքագիծը, ինչի մասին առավել

մանրամասն կներկայացնենք հաջորդ բաժիններում: Իսկ ՀՀ ԿԲ-ն կշարունակի իրականացնել համապատասխան միջոցառումներ գնաճի թիրախին հասնելու նպատակով, ինչը նշանակում է, որ 2022թ. դրամավարկային քաղաքականությունը կլինի զսպող՝ գնաճի տեմպը դանդաղեցնելու նպատակով: Ստացվում է, որ ամբողջական պահանջարկի խթանմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում երկու կարևոր մակրոտնտեսական քաղաքականությունների կողմից, հետևաբար, բարձր տնտեսական աճի ապահովումը, եթե իհարկե տեղի ունենա, կարող է դառնալ միայն մասնավոր հատվածի ջանքերի (ներդրումների և արդյունավետության բարձրացման) արդյունք:

Գծապատկեր 1. 2021 և 2022 թվականների տնտեսական աճի կանխատեսումները, %



2021թ. տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների աճերով, իսկ 2022թ. աճի արագացումը նախատեսվում է, որ կապահովեն արդյունաբերության և շինարարության ճյուղերը: Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես դրական ազդեցություն կունենան տնտեսական աճի վրա: Ամբողջական պահանջարկը կաճի՝ պայմանավորված ներքին պահանջարկի աճով:

Աղյուսակ 1. 2022թ. Պետական բյուջեի հիմքում դրվող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները²

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2020	2021	2022
	փաստացի	սպասում	ծրագիր
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,181.7	7,031.2	7,869.4
Տնտեսական աճ, %	-7.4	6.5	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	2.0	6.8	4.6
Գնաճ (Ժամանակաշրջանի վերջ), %	3.7	7.4	5.2
Գնաճ (միջին), %	1.2	7.0	5.6
ՀՆԱ իրական աճը՝ ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %			
Արդյունաբերություն	-1.7	4.3	8.0
Գյուղատնտեսություն	-4.1	5.6	3.9
Շինարարություն	-6.7	1.5	18.0
Ծառայություններ	-9.7	8.1	5.9
Զուտ հարկեր	-10.0	7.1	6.8
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)			
Ընթացիկ հաշիվ	-478.7	-241.8	-455.6
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,256.1	-1,334.6	-1,657.5
Արտահանում	3,762.6	4,521.2	5,270.7
Փոփոխություն, %	-34.2	20.2	16.6
Ներմուծում	5,018.7	5,855.8	6,928.2
Փոփոխություն, %	-33.2	16.7	18.3
Դրամական փոխանցումներ	1,040.2	1,398.8	1,468.7
Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ %)			
Ընթացիկ հաշիվ	-3.8	-1.7	-3.0
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-9.9	-9.6	-10.9
Արտահանում	29.8	32.6	34.5
Ներմուծում	39.7	42.2	45.4
Դրամական փոխանցումներ	8.2	10.1	9.6

Սպասվում է, որ ՀՆԱ դեֆլյատորը, որ ցույց է տալիս ՀՀ համախառն ներքին արտադրանքի գների փոփոխությունը, 2021թ. կլինի բարձր՝ շուրջ 6.8%, իսկ 2022թ. կդանդաղի՝ կազմելով 4.6%:

2021թ. կանխատեսվում է մոտ 20.2% արտահանման աճ, ինչը պայմանավորված կլինի արտաքին պահանջարկի վերականգնմամբ, մետաղների միջազգային գների աճով և դեպի Հայաստան ժամանման սահմանափակումների որոշակի թուլացմամբ: 2022 թվականին հանքարդյունաբերության ոլորտի մասշտաբների կրճատումը և տուրիզմի դանդաղ վերականգնումը զսպող գործոններ կլինեն ապրանքների և ծառայությունների արտահանման համար, ինչի

² ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 44:


արդյունքում արտահանման աճի տեմպը կդանդաղի՝ կազմելով 16.6%: Արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը, ըստ կառավարության կանխատեսումների, 2022թ. կկազմի 34.5%՝ զգալիորեն հեռու լինելով կառավարության ծրագրով թիրախավորված 43-45% ցուցանիշից:

2020 և 2021 թվականներին կառավարությունը որոշում էր կայացրել կիրառել հարկաբյուջետային կանոններով սահմանված «բացառիկ դեպքի» (“escape clause”) կարգավորումները, որոնք հնարավորություն էին տվել այդ տարիներին չպահպանել բյուջեի ընթացիկ և կապիտալ ծախսերի համար նախատեսված կանոնները: Սակայն, 2022 թվականից կառավարությունը հանձնառություն է վերցրել վերադառնալ հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը և ապահովել կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազում:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշները 2021թ. ընթացքում զգալիորեն շեղվել են նախապես կանխատեսվածից: Այսպես, 2021թ. պետական բյուջեով տարվա համար կանխատեսված ցածր տնտեսական աճի և ցածր գնաճի (տնտեսական աճը կանխատեսվել էր 3.2%, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ 2.0%) պայմաններում ծրագրավորվել էր 1540.6 մլրդ դրամ եկամուտներ, որոնց կազմում հարկային եկամուտները՝ 1471.3 մլրդ դրամ: Ընթացիկ տարվա սկզբում տնտեսական զարգացումներին համապատասխան՝ հատկապես գների աճի տեմպի մասով, կառավարությունը վերանայել է եկամուտների սպասումները՝ ավելացնելով դրանք շուրջ 107.8 մլրդ դրամով՝ 2022-2024թթ. ՄԺԾՄ փաստաթղթում և շուրջ 116.3 մլրդ դրամով՝ 2022թ. բյուջեի փաստաթղթում: Եկամուտների ավելացումը առավելապես պայմանավորված է հարկային եկամուտների ավելի բարձր սպասումներով:

Գծապատկեր 2. Պետական բյուջեների ցուցանիշների համեմատականը 2020-2022թթ., մլրդ դրամ



Եկամուտների սպասվող ցուցանիշների մեծացմանը զուգահեռ, կառավարությունը նախատեսել է նաև իրականացնել ընթացիկ ծախսերի ավելացում, ինչի հաշվին ծախսերի սպասվող ծավալն աճել է 2021թ. բյուջեով հաստատվածի համեմատ շուրջ 104.0 մլրդ դրամով՝ կազմելով 1986.0 մլրդ դրամ: Արդյունքում, պետական բյուջեի պակասուրդի անվանական ծավալը 2021թ. բյուջեով սահմանված ցուցանիշի համեմատ տարեվերջին կլինի շուրջ 12.3 մլրդ դրամով ավելի փոքր՝ կազմելով 329.1 մլրդ դրամ: Սակայն, անվանական ՀՆԱ-ի զգալիորեն ավելի մեծ լինելու հաշվին (3.3 տոկոսային կետով ավելի արագ տնտեսական աճի և 4.8 տոկոսային կետով ավելի բարձր ՀՆԱ դեֆլյատորի սպասումներով պայմանավորված) պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը կլինի բյուջեով կանխատեսված 5.3%-ից շուրջ 0.6 տոկոսային կետով ցածր՝ կազմելով 4.7%:

Կառավարության պարտքի կայունության և նվազող հետագծի ապահովման նպատակադրումից ելնելով՝ 2022թ. նախատեսվում է նվազեցնել պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 3.0%: Սակայն, պետք է նշել, որ դա ավելի բարձր է, քան 2022-2024թթ. ՄԺԾԾ փաստաթղթով նախատեսված մակարդակը՝ 2.1%-ը, ինչն ընկած էր 2022-2026թթ. կառավարության պարտքի բեռի նվազեցման ծրագրի հիմքում: Հետևաբար, ստացվում է, որ կառավարությունը 2022թ. շեղվելու է պարտքի նվազեցման ծրագրից՝ ունենալով ավելի մեծ պակասուրդ:

Պետական բյուջեի եկամուտները նույնպես կունենան զգալի աճ 2022թ.՝ ըստ կառավարության կանխատեսումների: Նախատեսվում է ունենալ շուրջ 17.6% եկամուտների աճ, որի պայմաններում եկամուտների ծավալը կհասնի 1947.8 մլրդ դրամի, իսկ ծախսերը կաճեն շուրջ 10.0%-ով՝ հասնելով 2184.0 մլրդ դրամի:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

Ինչպես նշեցինք նախորդ բաժնում, պետական բյուջեի եկամուտների 2021թ. սպասվող ցուցանիշը զգալիորեն վերանայվել է դեպի վերև 2021թ. պետական բյուջեով հաստատվածի համեմատ: Վերանայումը հիմնականում վերաբերել է հարկային եկամուտների ցուցանիշին, որը 1471.3 մլրդ դրամից վերանայվել է մինչև 1581.0 մլրդ դրամ: Հարկային եկամուտների կանխատեսման՝ աճի ուղղությամբ վերանայումը պայմանավորված էր տարեսկզբին հարկային եկամուտների գերակատարմամբ (ինչն էլ իր հերթին կապված էր փոխարժեքի արժեզրկման և գների աճի հետ), ինչպես նաև անվանական ՀՆԱ-ի ավելի բարձր կանխատեսումներով:


Սակայն, հարկ է նկատել, որ կառավարության նախկին սպասումների համեմատ նվազել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Այսպես, 2021թ. պետական բյուջեով նախատեսվում էր 2021թ. ունենալ 23.0% հարկեր/ՀՆԱ ցուցանիշ, որը 2020թ. համեմատ կլիներ շուրջ 0.6 տոկոսային կետով ավելի բարձր: Այնուհետև, անվանական ՀՆԱ-ի կանխատեսումների վերանայման պայմաններում հարկային եկամուտների կանխատեսումը համամասնորեն չի վերանայվել, ինչի արդյունքում 2021թ. նախատեսվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ընդամենը 0.1 տոկոսային կետով բարելավում 2020թ. համեմատ: Սա այն պայմաններում, երբ 2021թ. զգալիորեն բարձրացվել են դրոշմանիշային վճարների դրույքաչափերը (Ձինձառայողների ապահովագրության հիմնադրամին ուղղվող գումարների) և սահմանվել է արտահանման տուրք հանքանյութերի արտահանման համար: Բացի այդ, հիշենք, որ 2020թ. շահութահարկի գծով սահմանվել էր արտոնություն, ըստ որի հարկ վճարողները ազատվել էին երկրորդ եռամսյակում շահութահարկի կանխավճարներ իրականացնելու պարտավորությունից, հետևաբար, դրանք տեղափոխվել են 2021 թվական: Այս գործոնների պայմաններում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ընդամենը 0.1 տոկոսային կետով բարելավումը ցույց է տալիս, որ առկա են հարկային վարչարարության վատթարացման միտումներ:

Պետք է նշել, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության զարգացումները բարենպաստ չեն եղել 2021թ., քանի որ առաջին կիսամյակի տվյալներով, նույնիսկ վերը նշված շահութահարկի գործոնի առկայության պայմաններում, արձանագրվել է հարկեր/ՀՆԱ-ի անկում՝ շուրջ 0.6 տոկոսային կետով նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ:

Հարկային եկամուտների 2022թ. կանխատեսումները բավական հավակնոտ են: Կառավարությունը նախատեսում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շուրջ 0.9 տոկոսային կետով բարելավում, որը


պայմանավորված կլինի հանքարդյունաբերության որոշ արտադրատեսակների նկատմամբ արտահանման տուրքի կիրառմամբ և հարկային վարչարարության բարելավմամբ: Անիրատեսական բարձր տնտեսական աճի կանխատեսման պայմաններում, նման բարձր հարկեր/ՀՆԱ հարաբերակցության թիրախավորումն ավելի է բարձրացնում հարկաբյուջետային ռիսկերը: 2021թ. զարգացումներից դատելով՝ մի կողմից դանդաղում է տնտեսական ակտիվությունը, մյուս կողմից նվազում է հարկային վարչարարության արդյունավետությունը: Հետևաբար, նման հավակնոտ թիրախներին հասնելու համար անհրաժեշտ է նախ ախտորոշել այդպիսի զարգացումների պատճառը, այնուհետև ներկայացնել բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրեր, ինչը, սակայն, չի իրականացվել: Ընդ որում, այդ միջոցառումները պետք է արդեն իսկ իրականացված լինեին՝ 2022 թվականին իրենց տնտեսական արդյունքը տալու համար:

Գծապատկեր 3. Պետական բյուջեի հարկային եկամուտները և հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը



Վերոհիշյալի արդյունքում սպասվում է, որ 2021 և 2022 թվականներին կփոխվի պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը, և կմեծանա հարկային եկամուտների կշիռը՝ մինչգնաժամային 2019թ. 93.5%-ից դառնալով 95.4%՝ 2021թ.-ին և 94.7%՝ 2022-ին:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2017-2022 թվականներին, %



Փոխարենը 2021թ. զգալիորեն կնվազի բյուջեի ոչ հարկային եկամուտների տեսակարար կշիռը՝ 2020թ. համեմատ 4.7 տոկոսային կետով, իսկ 2019թ. համեմատ շուրջ 2.6 տոկոսային կետով: 2022թ. ոչ հարկային եկամուտների կշիռը կկազմի 3.2%: Պաշտոնական դրամաշնորհների մասով նույնպես նախատեսվում է կշռի նվազում 2020թ. համեմատ: Սակայն, հաշվի առնելով այն, որ ներկա կառավարության գործունեության արդյունքում 2018-ից սկսած մինչև օրս պլանավորված դրամաշնորհներն ամբողջությամբ չեն ստացվել (դրամաշնորհների թերակատարումները հիմնականում պայմանավորված է եղել դոնորների հետ նախօրոք համաձայնեցված նախապայմանների չկատարմամբ), ապա, նույն գործելաոճի շարունակության պարագայում, առաջիկա տարիներին նույնպես հնարավոր է դրամաշնորհների թերակատարումներ, որի արդյունքում բյուջեի կառուցվածքի վերոհիշյալ ցուցանիշները կարող են շեղվել:


◀◀ պետական բյուջեի ծախսերը

Պետական բյուջեի ծախսերը 2020թ. զգալիորեն աճել են՝ պայմանավորված ինչպես COVID-19-ի համավարակի, այնպես էլ Արցախյան պատերազմի հետ կապված լրացուցիչ ծախսերի կարիքով: Թեև 2021թ. պետական բյուջեով նախատեսվում էր կրճատել ծախսերը (2021թ. պետական բյուջեով համավարակի և պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված ծախսեր նախատեսված չէին), այնուամենայնիվ, տարվա ընթացքում բյուջեի ցուցանիշները վերանայվել են և այժմ սպասվում է, որ ընդհանուր ծախսերը 2020թ. փաստացի ցուցանիշի համեմատ կաճեն շուրջ 4.8%-ով՝ կազմելով 1986.0 մլրդ դրամ: Դրանց կազմում ընթացիկ ծախսերը կաճեն շուրջ 5.6%-ով՝ կազմելով 1762.2 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը կնվազեն 1.1%-ով՝ կազմելով 223.8 մլրդ դրամ: Այսինքն՝ կառավարությունը 2021թ. նախատեսվածից ավելի հավաքագրված եկամուտները

Նախատեսել է ուղղել միայն ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: Իհարկե, «բացառիկ դեպքի» կարգավորումները թույլ են տալիս կառավարությանը մեծացնել ընթացիկ ծախսերը, սակայն առավել խելամիտ կլիներ լրացուցիչ եկամուտներն ուղղել նոր ներդրումային ծրագրերի իրականացմանը, ինչը կնպաստեր տնտեսական աճի արագացմանը ինչպես 2021, այնպես էլ 2022 թվականին: Ընդ որում, հենց կապիտալ ծախսերի մեծացման հիման վրա են կառուցված կառավարության 2022թ. բարձր տնտեսական աճ ապահովելու ծրագրերը, հետևաբար, անհասկանալի է, թե ինչու նույն մոտեցումը չի կիրառվում 2021 թվականին:

2022թ. պետական բյուջեի ծախսերը կշարունակեն աճել՝ հասնելով շուրջ 2184.0 մլրդ դրամի, որի կազմում ընթացիկ ծախսերը կաճեն շուրջ 4.5%-ով՝ կազմելով 1842.8 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը կաճեն բավական բարձր՝ 52.8%-ով՝ կազմելով 341.9 մլրդ դրամ:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման




Ծախսերի անվանական աճերին զուգահեռ, 2021 և 2022 թվականներին տեղի կունենա ընդհանուր ծախսերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ կշռի նվազում՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ ծախսերի կշռի նվազմամբ: Այսպես, 2021թ. սպասվում է, որ ընթացիկ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2020թ. փաստացի ցուցանիշի համեմատ կնվազի շուրջ 1.9 տոկոսային կետով՝ կազմելով 25.1%, իսկ 2022թ. նվազման չափը 2021թ. համեմատ կկազմի 1.7 տոկոսային կետ, արդյունքում ընթացիկ ծախսերը կլինեն ՀՆԱ-ի 23.4%-ի չափ: Միաժամանակ, 2021թ. կշռի

նվազում է նախատեսվում նաև կապիտալ ծախսերի դեպքում, որոնք կկազմեն ՀՆԱ-ի 3.2%-ը՝ 2020թ. համեմատ կրճատվելով շուրջ 0.5 տոկոսային կետով: 2022թ. նախատեսվել է կապիտալ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության զգալի աճ՝ 1.1 տոկոսային կետով, որի իրականացման պարագայում կապիտալ ծախսերը կհասնեն ՀՆԱ-ի 4.3%-ին:

Պետք է նշել, սակայն, որ կապիտալ ծախսերի զգալի աճի պլանավորումը նոր երևույթ չէ: Կառավարությունը գրեթե ամեն տարի ծրագրավորում է մեծացնել կապիտալ ծախսերը զգալի չափով, սակայն տարվա ընթացքում դրանք չեն կատարվում և աճը տեղի չի ունենում: Այսպես, 2019թ. պետական բյուջեով նախատեսվել էր կապիտալ ծախսերի աճ 2018թ. փաստացի ցուցանիշի համեմատ շուրջ 50%-ով, սակայն տարվա ընթացքում կատարվել է պլանավորվածի ընդամենը 73.3%-ը, ինչի արդյունքում ծախսերն աճել են ընդամենը 29.8%-ով: Ընդ որում, այդ 29.8% աճը հաշվարկվել է 2018թ. փաստացի ցուցանիշի համեմատ, որը նույնպես թերակատարմամբ պայմանավորված բավական փոքր է եղել պլանավորված ցուցանիշից (տես՝ Գծապատկեր 6): Նման իրավիճակ է գրանցվել նաև 2020թ.՝ այն տարբերությամբ, որ 2020թ. վերջում, Արցախյան պատերազմի հետ կապված զգալի չափով կապիտալ ծախսեր են իրականացվել, ինչի հաշվին բարելավվել է կատարողականը: Հատկանշական է, որ նույն իրավիճակը շարունակվում է նաև 2021 թվականին, և առաջին կիսամյակի տվյալներով կապիտալ ծախսերի թերակատարումը կազմել է շուրջ 36.3%:

Գծապատկեր 6. Կապիտալ ծախսերի ծավալները 2017-2021թթ. (մլրդ դրամ) և դրանց կատարողականը (%)




Հետևաբար, կառավարության ծրագրերը կապիտալ ծախսերի նման բարձր մակարդակի իրականացման հարցում արժանահավատ չեն կարող լինել:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

2022թ. պետական բյուջեի ծախսերի աճին ամենամեծ նպաստումը կունենան սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը: Վերջիններս 2021թ. բյուջեի համեմատ կաճեն շուրջ 15.2%-ով՝ կազմելով ընդհանուր ծախսերի 42.6%-ը: Ընդհանուր ծախսերի աճին զգալի նպաստում կունենա նաև ընդհանուր նշանակության պետական ծառայությունների ֆինանսավորումը, որի աճը կկազմի շուրջ 9.6%: Սակայն, ընդհանուր նշանակության պետական ծառայությունների գծով ծախսերի կշիռը կնվազի 2022թ.՝ կազմելով 43.4%: Փոխարենը տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը կաճեն շուրջ 36.0%-ով, իսկ դրանց տեսակարար կշիռը կավելանա 1.5 տոկոսային կետով՝ հասնելով 10.9-ի:

Գծապատկեր 7. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, %



2022թ. նախատեսվել է խոշոր պահուստային ֆոնդ՝ շուրջ 68.4 մլրդ դրամի չափով, որը կազմում է ընդհանուր ծախսերի 3.1%-ը: Նախորդ տարիներին պահուստային ֆոնդը բավական փոքր էր: 2020թ. փաստացի տվյալներով պահուստային ֆոնդի համար գումարներ չեն հատկացվել, իսկ 2021թ. համար նախատեսվել է բավական փոքր գումար՝ 3.9 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 0.2%-ը:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 բյուջե	2022 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	1,629.4	1,894.6	1,850.9	2,184.0
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	779.4	883.5	865.9	948.7
Տնտեսական ծառայություններ	134.0	138.9	174.5	237.4
Սոցիալական ծառայություններ	716.1	872.2	806.6	929.6
Պահուստային ֆոնդ	0.0	0.00	3.9	68.4
Աճ*, %				
Ընդամենը	12.6	16.3	-2.3	18.0
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	21.8	13.4	-2.0	9.6
Տնտեսական ծառայություններ	3.4	3.7	25.7	36.0
Սոցիալական ծառայություններ	11.3	21.8	-7.5	15.2
Պահուստային ֆոնդ	-100.0	-	-	17.5 անգ.
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	9.6	6.4	-0.9	4.5
Տնտեսական ծառայություններ	0.3	0.3	1.9	3.4
Սոցիալական ծառայություններ	5.0	9.6	-3.5	6.6
Պահուստային ֆոնդ	-2.4	0.0	0.0	3.5

* 2021թ. բյուջեի ցուցանիշների աճերը ներկայացված է 2020թ. փաստացի ցուցանիշների համեմատ, իսկ 2022թ. բյուջեի ցուցանիշների աճերը՝ 2021թ. բյուջեի համեմատ:

Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող գումարների ընդհանուր ծավալը 2022թ. կկազմի 948.7 մլրդ դրամ: Վերջինիս կազմում շուրջ 45.3%-ը՝ 430.1 մլրդ դրամը կլինեն ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ծախսերը, որոնց աճը 2021թ. բյուջեի համեմատ կկազմի 8.3%: Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ծախսերի կազմում խոշոր կշիռ ունեն նաև պետական պարտքի սպասարկման ուղղվող ծախսերը, որոնց ծավալը 2022թ. կկազմի 213.8 մլրդ դրամ՝ 2021թ. բյուջեի համեմատ աճելով 9.8%-ով՝ արտացոլելով պետական պարտքի ծավալի աճը:

Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերի կազմում զգալի կշիռ ունեն պաշտպանությանն ուղղված ծախսերը, որոնց ծավալը 2022 թվականին 2021-ի բյուջեի համեմատ կաճի 11.2%-ով՝ կազմելով 347.0 մլրդ դրամ: Ընդ որում, պետք է նշել, որ պաշտպանությանն ուղղվող ծախսերը 2020թ. փաստացի ցուցանիշի համեմատ կնվազեն շուրջ 10.5%-ով կամ 40.7 մլրդ դրամով, ինչը անհասկանալի է՝ հաշվի առնելով անվտանգության հետ կապված խնդիրների աճը, ավելի երկար դարձած սահմանները և սպառազինության վերականգնման անհրաժեշտությունը: Այդ պայմաններում ընդհանուր նշանակության պետական


ծառայությունների կառուցվածքում պաշտպանությանն ուղղված ծախսերի կշիռը կշարունակի մնալ ավելի փոքր, քան 2018-2020 թվականների փաստացի ցուցանիշները:

Փոխարենը ինչպես 2020թ. փաստացի, այնպես էլ 2021թ. բյուջեի ցուցանիշների համեմատ զգալիորեն կաճեն հասարակական կարգի, անվտանգությանը և դատական գործունեությանն ուղղվող ծախսերը՝ որոնց աճը 2020թ. համեմատ կկազմի 13.3%, իսկ 2021թ. բյուջեի համեմատ՝ 9.6%: Դրանց կշիռը ընդհանուր նշանակության պետական ծառայությունների կառուցվածքում 2021թ. համեմատ չի փոխվի և կկազմի 18.1%:

Աղյուսակ 3. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 բյուջե	2022 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	779.4	883.5	865.9	948.7
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	320.1	344.3	397.1	430.1
Պաշտպանություն	315.6	387.8	312.2	347.0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	143.7	151.4	156.6	171.6
Աճ, %				
Ընդամենը	21.8	13.4	-2.0	9.6
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	14.9	7.6	15.3	8.3
Պաշտպանություն	32.3	22.9	-19.5	11.2
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	16.7	5.4	3.4	9.6
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	6.5	3.1	6.0	3.8
Պաշտպանություն	12.0	9.3	-8.6	4.0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	3.2	1.0	0.6	1.7

Գծապատկեր 8. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %



Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը 2022թ. կկազմեն 237.4 մլրդ դրամ՝ 2021թ. բյուջեի համեմատ աճելով 36.0%-ով, որին ամենամեծ նպաստումը կունենա տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի 42.1% աճը՝ ունենալով 35.9 տոկոսային կետ նպաստում: Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի աճին կնպաստեն նաև բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայություններին ուղղվող ծախսերի 9.0% աճը, որի նպաստումը կկազմի 0.8 տոկոսային կետ:


Աղյուսակ 4. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 բյուջե	2022 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	134.0	138.9	174.5	237.4
Տնտեսական հարաբերություններ	111.9	125.6	148.9	211.6
Շրջակա միջավայրի պաշտպանություն	5.8	4.4	10.9	9.8
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	16.2	8.9	14.7	16.0
Աճ, %				
Ընդամենը	3.4	3.7	25.7	36.0
Տնտեսական հարաբերություններ	-0.3	12.2	18.6	42.1
Շրջակա միջավայրի պաշտպանություն	2.2	-23.9	146.2	-10.3
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	38.8	-45.2	65.0	9.0
Նպաստումը, տոկոսային կետ				
Տնտեսական հարաբերություններ	-0.2	10.2	16.8	35.9
Շրջակա միջավայրի պաշտպանություն	0.1	-1.0	4.7	-0.6
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	3.5	-5.5	4.2	0.8

Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը կնվազեն շուրջ 10.3 տոկոսով և կկազմեն 9.8 մլրդ դրամ, սակայն կլինեն շուրջ երկու անգամ ավելի շատ, քան 2020թ. փաստացի ցուցանիշը:

Արդյունքում տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքում 3.8 տոկոսային կետով կաճի տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի կշիռը՝ կազմելով 89.1%, և կնվազեն շրջակա միջավայրի պաշտպանությանը, բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայություններին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռները:

Գծապատկեր 9. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %




Պետական բյուջեի **սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը** 2022 թվականին կաճեն 15.2%-ով՝ հիմնականում պայմանավորված սոցիալական պաշտպանության և կրթության ոլորտներին ուղղվող ծախսերի համապատասխանաբար 15.1% և 25.7% աճերով, որոնց նպաստումները սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի աճին կկազմեն 9.5 և 4.9 տոկոսային կետ: Առողջապահությանն ուղղվող ծախսերի աճը կկազմի 4.2%՝ ընդհանուր սոցիալական ծառայությանն ուղղվող ծախսերի աճին նպաստելով 0.6 տոկոսային կետով, իսկ հանգստի, մշակույթի և կրոնի գծով ծախսերի նպաստումը կլինի աննշան՝ շուրջ 0.3 տոկոսային կետ:

Աղյուսակ 5. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2019 փաստ.	2020 փաստ.	2021 բյուջե	2022 բյուջե
մլրդ դրամ				
Ընդամենը	716.1	872.23	806.6	929.6
Առողջապահություն	99.3	148.2	117.5	122.5
Հանգիստ, մշակույթ և կրոն	33.6	33.6	30.6	32.8
Կրթություն	129.3	143.8	153.6	193.0
Սոցիալական պաշտպանություն	453.9	546.6	504.9	581.3
Աճ, %				
Ընդամենը	11.3	21.8	-7.5	15.2
Առողջապահություն	24.8	49.3	-20.7	4.2
Հանգիստ, մշակույթ և կրոն	32.6	0.2	-9.0	7.2
Կրթություն	6.3	11.2	6.8	25.7
Սոցիալական պաշտպանություն	9.0	20.4	-7.6	15.1
Նպաստումը, տոկոսային կետ				
Առողջապահություն	3.1	6.8	-3.5	0.6
Հանգիստ, մշակույթ և կրոն	1.3	0.0	-0.3	0.3
Կրթություն	1.2	2.0	1.1	4.9
Սոցիալական պաշտպանություն	5.8	12.9	-4.8	9.5

Արդյունքում, սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքում կաճի կրթությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը՝ հասնելով 20.8%-ի, իսկ սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը կմնա գրեթե նույն մակարդակում:

Գծապատկեր 10. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %




ՀՀ պետական բյուջեի պակասուրդը

2020թ. բացասական իրադարձությունների հետևանքով զգալի աճ է գրանցել պետական բյուջեի պակասուրդը՝ հասնելով 334.0 մլրդ դրամի: Տեղի ունեցած բացասական երևույթների ազդեցությունները շարունակվել են նաև 2021 թվականի ընթացքում, ինչի հետևանքով պետական բյուջեի պակասուրդը էականորեն չի նվազել և սպասվում է, որ կկազմի 329.1 մլրդ դրամ: Ինչպես արդեն նշել ենք, 2021թ. աճի ուղղությամբ վերանայվել են պետական բյուջեի եկամուտների կանխատեսումները, որոնք, սակայն, ուղղվել են ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը և դրական ազդեցություն չեն ունեցել բյուջեի պակասուրդի վրա:

Պետական բյուջեի պակասուրդի ծավալը կշարունակի մնալ բարձր մակարդակում (մինչճգնաժամային ժամանակահատվածի համեմատ) նաև 2022 թվականին և կկազմի 236.3 մլրդ դրամ: Պետական բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ նույնպես կպահպանվի բարձր մակարդակում՝ կազմելով 4.7% 2021թ. և 3.0% 2022-ին:

Հարկ է նկատել, որ բյուջեի պակասուրդը զգալի չափով նվազել է սկսած ներկա կառավարության գործունեության սկզբից մինչև ճգնաժամային 2020 թվականը: Սակայն, դա պայմանավորված է եղել, ոչ թե կառավարության կողմից նպատակադրված հարկաբյուջետային կոնսոլիդացիայի քաղաքականությամբ, այլ կապիտալ ծախսերի կատարման խնդիրներով: Այսինքն՝ պարզապես պլանավորված կապիտալ ծախսերը չեն իրականացվել, իսկ հարկաբյուջետային կանոնները թույլ չեն տվել չծախսված գումարներն ուղղել ընթացիկ ծախսերին, ինչի հետևանքով բյուջեի պակասուրդը փոքր է եղել: Իսկ 2020 և 2021 թվականներին, կառավարությունն ազատ է եղել գումարներն ուղղելու ընթացիկ ծախսերին, ինչի արդյունքում հնարավոր է եղել ունենալ մեծ պակասուրդ: Հետևաբար, անվստահություն է առաջանում կառավարության 2022թ. բյուջեի պակասուրդի կատարման նկատմամբ՝ հաշվի առնելով այն, որ կառավարությունը պետք է վերադառնա հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը:


Գծապատկեր 11. Պետական բյուջեի պակասուրդը



Ըստ 2021թ. պետական բյուջեի ճշտված պլանի (2021թ. հունիսի դրությամբ)՝ 2021թ. բյուջեի պակասուրդը գրեթե ամբողջությամբ (շուրջ 95.7%-ը) ֆինանսավորվելու է արտաքին աղբյուրների հաշվին, մասնավորապես՝ տարեսկզբին թողարկված եվրոպարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցների հաշվին:

2022թ. պատկերը հակառակը կլինի, այսինքն՝ պակասուրդն ամբողջությամբ կֆինանսավորվի ներքին փոխառությունների հաշվին: Արտաքին ֆինանսավորումը կլինի բացասական, ինչը նշանակում է, որ կառավարությունը նախատեսում է իրականացնել արտաքին փոխառությունների գծով մարումներ:

Գծապատկեր 12. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ. դրամ




Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում կարևոր է ուսումնասիրել նաև պետական բյուջեից վարկերի տրամադրման ծավալները, քանի որ դրանք հանդիսանում են պարտք ստեղծող գործառնություններ, սակայն չեն ներառվում ծախսերի մեջ: Այսպես, ՀՀ պետական բյուջեից վարկավորման ծավալները 2022թ. կկազմեն շուրջ 214.1 մլրդ դրամ՝ 2021թ. ճշտված պլանի համեմատ աճելով շուրջ 56.9%-ով, իսկ 2019թ. փաստացի ցուցանիշի համեմատ՝ ավելի քան երկու անգամ: Ընդ որում, վարկերի տրամադրման աճը առավելապես պայմանավորված է Արցախի Հանրապետությանը տրամադրվող միջպետական վարկի զգալի աճով, որը 2019թ. 57.8 մլրդ դրամից 2022 թվականին կաճի մինչև 144.0 մլրդ դրամ: Բնականաբար, Արցախի Հանրապետությանը նման մեծ ծավալով աջակցության կարիք առաջացել է պատերազմի աղետալի հետևանքների պատճառով:

ՀՀ պետական պարտքը

Բյուջեի պակասուրդի կտրուկ աճի, տնտեսական անկման, ինչպես նաև փոխարժեքի արժեզրկման հետևանքով ՀՀ պետական պարտքը կտրուկ աճել է 2020թ.՝ հասնելով 4164.3 մլրդ դրամի կամ 7.97 մլրդ ԱՄՆ դոլարի: Դրա զգալի մասը հանդիսանում է կառավարության պարտքը, որն էլ հենց եղել է 2020թ. ընդհանուր պետական պարտքի աճի պատճառը: Կառավարության պարտքը 2020թ. հասել է 7.5 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 63.5%՝ գերազանցելով «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության 60% սահմանային շեմը: Ընդհանուր կառավարության պարտքի 74.6%-ը, որը կազմում է ՀՆԱ-ի 47.3%-ը, հանդիսանում է արտաքին պարտքը:

2021թ. սպասվում է կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազում շուրջ 2.7 տոկոսային կետով, որը կուղեկցվի նաև պարտքի կառուցվածքի բարելավմամբ: Այսպես, արտաքին պարտքի տեսակարար կշիռը կնվազի շուրջ 2.9 տոկոսային կետով և կկազմի 71.7%, և, փոխարենը, նույն չափով կաճի ներքին պարտքի տեսակարար կշիռը՝ կազմելով 28.3%: Նմանատիպ դինամիկա կլինի նաև 2022թ.: Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կնվազի շուրջ 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 60.2%, իսկ արտաքին պարտքի կշիռը կնվազի 2.7 տոկոսային կետով և կկազմի 69%:

Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2018-2022թթ., %



ՀՀ պետական բյուջեի համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին

ՀՀ հարկաբյուջետային նոր կանոնների համակարգը մշակվել և հաստատվել է 2017 թվականի դեկտեմբերի 20-ին՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

1. Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
2. Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության՝ 50-60% միջակայքում գտնվելու դեպքում ընթացիկ առաջնային ծախսերի³ աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով:
3. Երբ կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ:

³ Ընթացիկ առաջնային ծախսերը հաշվարկվում են որպես ընթացիկ ծախսերի և կառավարության պարտքի գծով տոկոսավճարների տարբերություն:

Ըստ բյուջեի ուղերձում ներկայացված տեղեկատվության՝ ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականներին պետական բյուջեի ցուցանիշները շեղվել են հարկաբյուջետային կանոններից: 2020թ. ընթացիկ ծախսերի աճը եղել է կանոնով հաշվարկված աճից շուրջ 8.9 տոկոսային կետով բարձր (ըստ կանոնների ընթացիկ առաջնային ծախսերի աճը պետք է կազմեր 5.9%, սակայն փաստացի եղել է 14.8%), իսկ կապիտալ ծախսերը ցածր են եղել կանոնով պահանջվածից շուրջ 106.3 մլրդ դրամով:

«Բացառիկ դեպքի» կարգավորումների պահպանումը 2021թ. թույլ է տվել կառավարությանը ևս մեկ տարի շեղվել հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգավորումներից: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի աճը սպասվում է, որ կլինի շուրջ 5.2 տոկոսային կետով ավելի բարձր կանոններով սահմանված մակարդակից, իսկ կապիտալ ծախսերը կլինեն շուրջ 105.3 մլրդ դրամով փոքր:

Հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգով կառավարությունը 2021թ. հուլիսին ներկայացրել է «ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագիրը», որով նախատեսվել է առաջիկա 5 տարիների ընթացքում նվազեցնել պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 53.8%: Ծրագրում պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազեցումը նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիայի և տնտեսական աճի ապահովման միջոցով: Սակայն, չի հստակեցվում, թե ինչպես պետք է ապահովվի հարկաբյուջետային կոնսոլիդացիան, ինչ ծախսեր պետք է կրճատվեն, կամ ինչպես պետք է ավելացվեն եկամուտները: Հետևաբար, այդ առումով դա պարզապես ուղենիշային փաստաթուղթ է, որը արտացոլում է կառավարության մտադրությունները ապագայում պարտք/ՀՆԱ հարաբերակցության վերաբերյալ: Այնուամենայնիվ, 2022թ. պետական բյուջեի նախագիծը համահունչ է պարտքի բեռի նվազեցման ծրագրին, քանի որ նախատեսում է կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազեցում ինչպես 2021, այնպես էլ 2022 թվականին:

2022 թվականից կառավարությունը կվերադառնա հարկաբյուջետային կանոնների ամբողջական պահպանմանը: Այդ հանձնառությունը արտացոլված է նաև հարկաբյուջետային ցուցանիշներում, որոնք համապատասխանում են հարկաբյուջետային կանոններին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով կարող ենք նշել, որ կառավարության կողմից ներկայացված 2022թ. պետական բյուջեի նախագիծը չի արտացոլում առկա իրողությունները, քանի որ այն հիմնված է անիրատեսական բարձր տնտեսական աճի սպասումների վրա: Ընթացիկ՝ 2021 թվականին կառավարությունը գործել է իրավիճակային որոշումների կայացման սկզբունքով, և տարվա ընթացքում բազմիցս փոփոխվել է բյուջեի պլանը՝ հիմնականում այն պատճառով, որ չէին նախատեսվել COVID-19-ի համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների մեղմման համար անհրաժեշտ միջոցառումներ: Սակայն, քանի որ կանխատեսված տնտեսական աճն ավելի ցածր էր, քան փաստացի զարգացումները, բյուջեում փոփոխություններ կատարելը և նոր ծախսեր ծրագրավորելն ավելի հեշտ էր իրականացնել՝ կանխատեսվածից ավելի բարձր եկամուտների հաշվին: Նույնը, սակայն, չի կարող իրականացվել 2022 թվականին, քանի որ տնտեսական աճը, ըստ բոլոր կանխատեսումների, կլինի կառավարության կանխատեսումից ավելի ցածր, հետևաբար հարկային եկամուտները նույնպես չեն հավաքագրվի ծրագրված չափով: Արդյունքում, կառավարության համար կոժվարանա ստանձնած պարտավորություններն ամբողջ ծավալով իրականացումը, և կարիք կառաջանա այդ նպատակի իրականացման համար ավելի շատ պարտք ներգրավել: Սակայն, դա նույնպես հեշտ չի լինի, քանի որ ներգրավված պարտքը, հարկաբյուջետային կանոնների պահպանման պարագայում չի կարող ուղղվել ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Կատարված վերլուծության հիման վրա, 2022թ. պետական բյուջեի նախագծի վերաբերյալ կարող ենք առանձնացնել հետևյալ խնդրահարույց կետերը.

Ներկայիս տնտեսական զարգացումների համատեքստում կանխատեսվել է չափազանց բարձր և անիրատեսական տնտեսական աճ: Ընդհանուր առմամբ կառավարության կողմից իրականացված տնտեսական քաղաքականությունը ունեցել է բավական ցածր արդյունավետություն: Մասնավորապես, 2020թ. իրականացված հակաճգնաժամային միջոցառումներն էական դրական ազդեցություն չեն ունեցել տնտեսական անկման մեղմման տեսանկյունից (տնտեսական անկումը 2020թ. մեղմվել է ընդամենը 1.3 տոկոսային կետով), և ՀՀ-ում գրանցվել է տարածաշրջանի և գործընկեր երկրների շարքում ամենախոր տնտեսական անկումը: 2021թ. տնտեսական վերականգնում գրեթե տեղի չի ունեցել, իսկ օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գրանցվել է տնտեսական ակտիվության դանդաղում՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմելով 4.4%: Հետևաբար, այս պայմաններում ինչպես 2021թ.՝ 6.5%, այնպես էլ 2022թ. 7% տնտեսական աճի ապահովումն անիրատեսական է համարվում, իսկ դրա հիման վրա կառուցված բյուջեն՝ բավական ռիսկային:

Կապիտալ ծախսերի ցածր կատարողականների պայմաններում պլանավորվել է դրանց շուրջ 53% աճ: Սկսած 2018թ. նոր կառավարության գործունեության սկզբից, կապիտալ ծախսերի կատարողականը կտրուկ նվազել է, և 2018-2020 թվականներին փաստացի պետական կապիտալ ծախսերը զգալիորեն զիջել են պլանավորվածին: Նույն իրավիճակը շարունակվում է նաև 2021թ., երբ առաջին կիսամյակում իրականացվել է պլանավորված կապիտալ ծախսերի ընդամենը 63.7%-ը: Այս պայմաններում, 2022թ. կառավարության կողմից նախատեսվել է կապիտալ ծախսերի շուրջ 52.8% աճ, որի արդյունքում դրանց ծավալը կհասնի շուրջ 341.9 մլրդ դրամի: Սակայն, ընթացիկ տարում բյուջեով պլանավորված ընդամենը 216.3 մլրդ դրամ ծավալով կապիտալ ծախսերի ցածր կատարողականն արդեն իսկ անհավատալի է դարձնում այդքան մեծ ծավալի ամբողջությամբ կատարումը 2022 թվականին: Մինչդեռ, այդ չափով կապիտալ ծախսերի կատարումը հենց հանդիսանում է 7% տնտեսական աճի ապահովման հիմնասյուներից մեկը: Հետևաբար, կապիտալ ծախսերի թերակատարումը 2022թ. կհանգեցնի նաև տնտեսական աճի թիրախի խախտմանը՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

2022թ. պետական բյուջեի նախագծում նախատեսվել է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության չափազանց բարձր՝ շուրջ 0.9 տոկոսային կետով բարելավում: ՀՀ-ում պատմականորեն (2000-2020թթ.) հարկեր/ՀՆԱ հարաբերակցության միջին աճը կազմել է 0.3 տոկոսային կետ: Վերջին տարիներին հարկեր/ՀՆԱ-ի կտրուկ աճ է տեղի ունեցել 2019-ին, որը, սակայն, առավելապես պայմանավորված էր միանգամյա գործոններով, և այդ տեմպը չի պահպանվել հաջորդ տարիներին: Ավելին, 2021թ. առաջին կիսամյակի տվյալներով տեղի է ունեցել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության նվազում, այն պայմաններում, երբ 2021թ. զգալիորեն բարձրացվել են դրոշմանիշային վճարների դրույքաչափերը (Չինծառայողների ապահովագրության հիմնադրամին ուղղվող գումարների) և սահմանվել է արտահանման տուրք հանքանյութերի արտահանման համար, որոնք պետք է նպաստեին հարկեր/ՀՆԱ-ի բարելավմանը: Ակնհայտ է, որ նախ պետք է ավտորոշել նման զարգացումների պատճառները, այնուհետև ներկայացնել բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրեր, ինչը սակայն չի իրականացվել: Հետևաբար, 2022թ. 0.9 տոկոսային կետով հարկեր/ՀՆԱ-ի բարելավման թիրախը խոսում է կառավարության ոչ թե դրական սպասումների, այլ իրավիճակը չպատկերացնելու մասին: Վերջինս, բնորոշ լինելով նաև այլ անիրատեսական թիրախներին, նվազեցնում է կառավարության նկատմամբ վստահությունը և ավելացնում անորոշությունները: Պետք է նշել նաև, որ հարկերի նման ագրեսիվ աճի ապահովումը պահանջում է ինչպես օրենսդրական բարեփոխումներ, այնպես էլ հարկային վարչարարության զգալի ջանքերի ներդրում: Դրանք սակայն, լրացուցիչ բացասական գործոններ են

բարձր տնտեսական աճի ապահովման տեսանկյունից: Հետևաբար, այս թիրախը նույնպես զգալի ռիսկեր է պարունակում:

Պաշտպանությանն ուղղվող ծախսերը ցածր են մինչճգնաժամային ժամանակահատվածի ցուցանիշից: Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերի կազմում զգալի կշիռ ունեն պաշտպանությանն ուղղված ծախսերը, որոնց ծավալը 2022 թվականին 2021-ի բյուջեի համեմատ կաճի 11.2%-ով՝ կազմելով 347.0 մլրդ դրամ: Ընդ որում, պետք է նշել, որ **պաշտպանությանն ուղղվող ծախսերը 2020թ. փաստացի ցուցանիշի համեմատ կնվազեն շուրջ 10.5%-ով կամ 40.7 մլրդ դրամով**, ինչն անհասկանալի է՝ հաշվի առնելով անվտանգության հետ կապված խնդիրների աճը, ավելի երկար դարձած սահմանները և սպառազինության վերականգնման անհրաժեշտությունը: Այդ պայմաններում ընդհանուր նշանակության պետական ծառայությունների կառուցվածքում պաշտպանությանն ուղղված ծախսերի կշիռը կշարունակի մնալ ավելի փոքր քան 2018-2020 թվականների փաստացի ցուցանիշները:

Պետական պարտքի բեռի նվազեցման ծրագիրը զուրկ է հստակ միջոցառումներից: Հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգով կառավարությունը 2021թ. հուլիսին ներկայացրել է «ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագիրը», որով նախատեսվել է առաջիկա 5 տարիների ընթացքում նվազեցնել պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 53.8%: Ծրագրում պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազեցումը նախատեսվում է իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացիայի և տնտեսական աճի ապահովման միջոցով: Սակայն, ինչպես պարտքի նվազեցման ծրագրում, այնպես էլ 2022թ. պետական բյուջեի նախագծի փաթեթում չի հստակեցվում, թե ինչպես պետք է ապահովվի հարկաբյուջետային կոնսոլիդացիան, ինչ ծախսեր պետք է կրճատվեն, կամ ինչպես պետք է ավելացվեն եկամուտները: Հետևաբար, այդ առումով պարտքի բեռի նվազեցման ծրագիրը պարզապես ուղենիշային փաստաթուղթ է, որը արտացոլում է կառավարության մտադրությունները ապագայում պարտք/ՀՆԱ հարաբերակցության վերաբերյալ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից բաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: